

## Կարապետ Հակոբյան

### ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐ-ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1895–1907 ԹԹ.

Հ. Յ. Դաշնակցության առաջին խմբակները Բուլղարիայում ստեղծվել են 1894 թ. Բուլղարիա եկած ՀՅԴ գործիչ Գարեգին Խաժակի (Գարեգին Բաբայան) ջանքերով: ՀՅԴ խմբակներ են կազմակերպվում Սլիվեն, Յամբոլ, Վառնա, Շումեն, Ռոսե քաղաքներում, ավելի ուշ՝ Պլովդիվում: Բուլղարիայում ՀՅԴ առաջին գործիչներն են դառնում Բուլղարացի Պետոն (Պետրոս Սերենճյան), Հակոբ Պենյանը, Թագուշ Հակոբյանը, Գարեգին Խաժակը, Վարդոն (Վարդ Պատրիկյան), Անտոն Գոշը, Հովակիմ Թահմիզյանը, Վահան Մանվելյանը (Տողրամաճյան), Հովհաննես Նևրուզյանը (Օնիկ Նևրուզ), Թագվոր Չագըլնյանը, Կարապետ Ադամյանը, Գրիգոր Կեզյանը (Բուլղարացի Գրիգոր), ակնեցի Նշան ժամկոչյանը, ֆիլիպեցի Տիրան Մինասյանը, Պետրոս Ղարազյոզյանը, Հովհաննես Սերենգուլյանը (Վարդգես), Արշակ Վռամյանը (Օնիկ Դերձակյան), Մելքոն Կյուրճյանը (Հրանտ), մալկարացի Թաթուլը, Խաչիկ Մարտիրոսյանը, դոկտոր Գ. Լիսյանը և ուրիշներ<sup>1</sup>: Բայց, հայ և բուլղար-մակեդոնացի հեղափոխականների միջև համագործակցության առաջին քայլերը սկսվում են Եվրոպայում՝ ժնևում գտնվող Հ. Յ. Դաշնակցության օրգան «Դրոշակ»-ի խմբագրատանը: Դեռևս 1895 թվականին բուլղար և մակեդոնացի հեղափոխականները հաճախում էին «Դրոշակ»-ի խմբագրատուն: Բազմաթիվ էին միտինգներն ու քարոզչությունը, որտեղ Եվրոպայի առջև արծարծվում էին հայ-բուլղար-մակեդոնական դատերը: Ցույցեր էին կազմակերպվում նաև Փարիզում, Լոնդոնում, Միլանում և այլուր<sup>2</sup>: Այդ համագործակցության և համերաշխության մասին «Դրոշակ»-ը գրում է. «Բուլղարական Ստրանջա ընկերությունը կօչ է անում բոլոր հայերին, հոյներին եւ բուլղարներին եղբայրաբար միանալ եւ ընդհանուր ուժերով յարձակուել ընդհանուր թշնամու՝ Օսմանեան բռնապետութեան դէմ եւ տապալել այն»<sup>3</sup>: Մեկ այլ համարում նույն թերթը գրում է, որ Օսմանյան ընդդիմադիր ուժերը պետք է մի կողմ թողնեն բոլոր քաղաքական, կրոնական և այլ կարգի տարածայնությունները և հանդես գան համատեղ: Թերթը գտնում է, որ միայն միասնաբար հանդես գալու դեպքում է հնարավոր հասնել արդյունքի:

Միևնույն ժամանակ «Դրոշակ»-ը մեջբերում է մակեդոնական գերագույն կոմիտեի խմբագրականը, ուր մակեդոնացի հեղափոխականները ողջունելով հայ հեղափոխականների (ՀՅԴ) առաջարկած միասնաբար հանդես գալու կոչը՝ նշում է, որ եթե բոլոր ընդդիմադիր ուժերը համախմբվեն՝ դա կլինի Թուրքիայի աստիճանի վերջին օրը<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Պետիկեան Ա., Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, գրեց՝ Արմէն, «Հայրենիք» ամսագիր, խմբ. Ռ. Դարբինեան, Բոստոն, հոկտեմբեր, 1933, թիւ 12, էջ 103, տե՛ս նաև Մազմանեան Վ., Պուլկարահայ գա-ղութը 1896-ին եւ յեղափոխական գործիչները, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1940, թիւ 9, էջ 79-85, տե՛ս նաև Մազմանեան Վ., Պուլկարահայ յեղափոխական գործիչները, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1940, թիւ 12, էջ 141-146:

<sup>2</sup> Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 217:

<sup>3</sup> «Դրոշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, ժընեւ, 31-ը մարտի, 1897, թիւ 6:

<sup>4</sup> Տե՛ս «Դրոշակ», օգոստոս, 1899, թիւ 7:

1895 թ. կեսերից նման շփումներ են սկսվում նաև Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլսում և մի քանի ամսվա բանակցությունների արդյունքում վերածվում հայ-մակեդոնական դաշինքի:

Դեռևս 1895 թ. հունիսի 8 –ին ՀՀԴ Կ. Պոլսի կազմակերպության ղեկավար Հովհաննես Յուսուֆյանը (Մելիք) «Դրօշակի» խմբագրությանն ուղղված նամակում հայտնում է հայ-մակեդոնական շփումների մասին: «Բուլգարներու (մակեդոնացիների - Կ. Հ.) ներկայացուցիչը երկու օր է հոս եկած է յատկապէս մեզ հետ բանակցելու համար, - գրում է Հ. Յուսուֆյանը, - Անոնք կուզեն գործել դինամիտով եւ մեր գործակցութիւնը կուզեն: Մենք տակաւին ... վերջնական համաձայնութիւն չտուինք: Եթէ համաձայնինք, պէտք է միաժամանակ գործենք Պոլիս եւ Մակեդոնիա: Կարծես թէ պիտի համաձայնինք...»<sup>1</sup>: Նույն տարվա հուլիսի 25 – ին գրած նամակում հայտնելով մակեդոնացիների հետ պաշտոնական բանակցություններն ավարտելու մասին՝ Հ. Յուսուֆյանը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի բովանդակությունը՝ մասնավորապես նշելով. «Հոս կուզեն մեզի ձգել, իրենք կխոստանան ինչքան պէտք է մեզի հայթայթել (խոսքը դինամիտի մասին է - Կ. Հ.) եւ կփափաքին, որ շուտով սկսինք ... Հոս ինչ որ ընենք այդ ուղղութեամբ, երկուքիս անունով պիտի ըլլայ, իսկ իրենցը՝ իրենց անունով, բայց արդեօք մի այսպիսի միացեալ գործունեութիւն մը մեր դատին արդի պայմաններու մէջ օգտակար, թէ վնասակար կրնայ ըլլալ: Մենք սկզբունքով համաձայնած ենք, բայց միայն կվախնանք, թէ վնասենք, փոխանակ օգնելու...»<sup>2</sup>:

Հետագա շաբաթների ընթացքում, սակայն, փարատվում են համագործակցության նպատակահարմարության վերաբերյալ կասկածները: Ստացվում է նաև ՀՀԴ ղեկավար մարմինների համաձայնությունը: Սեպտեմբերի 9 – ին Հ. Յուսուֆյանն արդեն հայտնում է դինամիտի առաջին խմբաքանակի ստացման և պայմանագրի շուրջ վերջնական համաձայնության գալու մասին<sup>3</sup>: Սեպտեմբերի 21 – ի նամակում, որը գրվել է Հնչակյանների կազմակերպած Բաբ Ալիի ցույցից հետո՝ Կ. Պոլսում ստեղծված ծանր իրադրության պայմաններում, Յուսուֆյանը հայտնում է. «Վճռած ենք մակեդոնացիներու հետ ռումբ-դինամիտի դիմել ...»<sup>4</sup>: Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 26 – ին նա ոչ միայն հայտնում է մեծ քանակությամբ ուժանակ և ռումբեր ստանալու մասին, այլև ըստ էության առաջին անգամ առաջ է քաշում Կ. Պոլսում ռմբային կռիվներ սկսելու գաղափարը՝ դա համարելով օրհասական վիճակում գտնվող հայության փրկության ելքը:

Հայ-բուլղար-մակեդոնացի հեղափոխականների համերաշխության առաջին կոչերը հնչում են այս նույն ժամանակ, որի մասին «Դրօշակ»-ը ժամանակին գրել է. «Լօզանի համալսարանի բուլգար ուսանողներից Մակեդոնիայի ապստամբութեան առթիւ ստացել ենք մի ոգեվորուած հրաւեր-ուղերձ, որտէղ նրանք, ողջունելով հայ յեղափոխական շարժումը, եւ յաջողութիւն մաղթելով Հ. Յ. Դաշնակցութեանը՝ շեշտում են երկու վիճակակից ժողովուրդների միացեալ գործունեութեան վրայ»<sup>5</sup>:

<sup>1</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յաւելած «Հայրենիք» ամսագրի, կազմեց Ս. Վրացեան, Ա. հատ., Պոսթըն, 1934, էջ 238:

<sup>2</sup> Անդ, էջ 240:

<sup>3</sup> Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 242:

<sup>4</sup> Անդ, էջ 246:

<sup>5</sup> «Դրօշակ», յուլիս, 1895, թիւ 9:

Օսմանյան ընդդիմադիր ուժերի, այդ թվում՝ բուլղար-մակեդոնացիների հետ համագործակցելու խնդրին են անդրադարձել նաև ՅՅԴ ղեկավար մարմինները: ՅՅԴ Կովկասյան մարմինների 1897–1898 թթ. տարեկան շրջանային ժողովը կայացնում է որոշում՝ «1. Հարաբերություն սկսել թուրքահպատակ միև ազգերի յեղափոխական կազմակերպությունների հետ համերաշխ գործակցելու համար, 2. Դիմել թուրքահպատակ մեզ վիճակակից բոլոր ազգություններին՝ բացատրելով, որ մեր նպատակն է ձեռք բերել ներքին ինքնավարություն հայկական նահանգների համար եւ նրանց առաջարկել համերաշխ գործակցելով մեզ հետ՝ ձգտել նոյն նպատակներին, վերաբերմամբ, որտեղ իրենք են բնակչության գերակշռող տարրը կազմում»<sup>1</sup>:

Հ. Յ. Դաշնակցության և Օսմանյան ընդդիմադիր ուժերի համագործակցության հարցին անդրադարձել է նաև 1898 թ. կայացած ՅՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը: Այն դրել էր հետևյալ խնդիրները՝ «1. Ասորեստան պատգամաւոր ուղարկել Երկիրն ուսումնասիրելու եւ հարկաւոր տեղեկութիւններ բերելու նպատակով, 2. Ջանալ կապեր հաստատել մակեդոնացիների, յոյների, քիւրդերի եւ միւս տարրերի հետ, 3. Երիտթիւրքերի հետ շարունակել համերաշխ գործունէութեան մասին սկսած բանակցութիւնները ...»<sup>2</sup>:

Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների հետ Հ.Յ. Դաշնակցության համագործակցության ուղղությամբ կատարվող քայլերն ավելի են ամրապնդվում 1898 թվականին, երբ ՅՅԴ հիմնադիր-անդամ Ռոստոմը (Ստեփան Ջորյան) որպես տեղի վարժարանի տեսուչ և ՅՅԴ Բալկանյան մարմինների ընդհանուր ղեկավար՝ հաստատվելով Բուլղարիայի Ֆիլիպս քաղաքում՝ միաժամանակ կատարելագործում է պայթուցիկ նյութեր պատրաստելու իր արհեստը, որն հետագայում դարձյալ Բուլղարիայում շարունակում է ՅՅԴ առաջնորդ Քրիստափոր Միքայելյանը: Սակեդոնացի հեղափոխականների շնորհիվ Հ. Յ. Դաշնակցությունը Բուլղարիայի կառավարությունից ստանում է զանազան արտոնություններ: Բուլղար նախարարների և այլ բարձրաստիճան անձանց հետ ՅՅԴ գործիչները ստեղծեցին սերտ բարեկամական կապեր՝ շնորհիվ մակեդոնացի հեղափոխական գործիչ Բորիս Սարաֆովի և իր ընկերների<sup>3</sup>: Այս մասին Ռոստոմը 1899 թ. մի նամակում գրում է. «Քանի օր է սպասում են մակեդոնական կոմիտեի կողմից որոշ պատասխանի, բայց դեռևս ոչինչ չկայ: Երեւի ելք չեն գտնում: Մի կողմից շատ են ուզում մեզ հետ իրենց համերաշխութիւնը մի կերպ ցոյց տուած լինեն, միւս կողմից սրանք դէն են առհասարակ ամէն տեսակ դիմումների (խոսքը եվրոպական մեծ տերութիւնների դիվանագետներին ուղղվելիք դիմումի մասին է – Կ. Հ.)»<sup>4</sup>: «Ուղղակի դիմումի հարցը այնքան ծանր խնդիր է սրանց աչքում, - 1899 թ. մայիսի 22 – ի նամակում իր միտքն է շարունակում Ռոստոմը, - որ նոր ժողով անհրաժեշտ կլինէր, եթէ մինչեւ իսկ այստեղ մնացածները քիչ, թէ շատ տրամադրութիւն ցոյց տային ձեր առաջարկները ընդունելու: Երբ սրանց ներկայացուցչին թարգմանեցի ձեր նամակը, սա միայն կտրուկ կերպով հայտնեց, թէ ուղղակի դիմումը դիվանագետներին հակառակ կլինի իրենց խղճին: Սրա կարծիքով՝

<sup>1</sup> Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր), հրատ. ՅՅԴ Բիւրօյի, խմբ. Հր. Տասնապետեանի, Բ. հատ., բ. տպագր., Պէյրուք, 1985, էջ 40:

<sup>2</sup> Տե՛ս Նիւթեր..., Բ. հատ., էջ 61:

<sup>3</sup> Տե՛ս Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 216:

<sup>4</sup> Ռոստոմ, Նամականի (մահուան ութսունամեակին առթիւ), խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրուք, 1999, էջ 155:

այդ տեսակ դիմումները միմիայն փչացնում են հասարակութիւնը, վարժեցնում սրան՝ հոյսը դնելու այս կամ այն արտաքին ոյժի վրայ...»<sup>1</sup>:

Ինչպէս երևում է Ռոստոմի առաջին նամակներից, սկզբնական շրջանում ՅՅԴ ղեկավար գործիչները այնքան էլ լուրջ չէին ընդունում մակեդոնացի հեղափոխականներին, բայց արդեն 1899 թ. վերջից այս տրամադրությունները փոխվում են: Այդ է վկայում նաև Ռոստոմի՝ ՅՅԴ Արևմտյան բյուրոյին ուղղված 1899 թ. դեկտեմբերի 29 – ի նամակը, ուր նա գրում է. «Պետօն, որ Սօֆիայ է, ամէն կողմից վստահելի է եւ բաւական հարմարութիւններ ունի մակեդոնական կօմիտէի հետ յարաբերութիւններ պահպանելու. բոլոր անդամներու հետ ծանօթ է»<sup>2</sup>: «Մակեդոնական կօմիտէի հետ միասին պատրաստուում ենք դէպի Տաճկաստան ճանապարհ ձգել մի խումբ. – տեղեկացնում է Ռոստոմը մեկ այլ նամակում, - Խումբը բաղկացած է վեց հոգուց, որոնցից՝ երեք հայ, երեք մակեդոնացի: Խմբի նպատակն է՝ ներս մտնել Թուրքիա եւ իրենց յայտնի չոր բաջիներից բռնի դրամ կորզել: Չեռք բերած դրամի կէսը մերը կլինի, կէսը՝ մակեդոնական կօմիտէինը: Խմբի մակեդոնացի անդամները փորձուած են այս տեսակի գործերում: Մերոնք էլ վստահելի են եւ փորձուած կռուողներ: Այնպէս որ, յաջողութիւնը ապահովուած կարելի է համարել:

Հիմա, եթէ կանոնադրութիւնը թոյլ է տալիս, խնդրում են՝ անմիջապէս տղայոց հասցնել 500 ֆր.՝ զգեստի, գրպանի ծախսի, ճանապարհածախսի, մասամբ նաեւ զենքի համար: Կրկնում են՝ յաջողութիւնը ապահովուած է. անյաջողութիւնը այն կլինի, որ խումբը կռի բռնուի տաճիկ զինուորների հետ: Այս դեպքում մենք կունենանք հայ–մակեդոնական միացեալ խմբի մի կռիւ եւ, հավատացած են, փայլուն կռիւ»<sup>3</sup>:

1900 թ. հուլիսի 26–ին Ռուսչուկից գրած նամակում անդրադառնալով այդ շրջանում ՅՅԴ –ի համար խիստ կենսունակ դրամական խնդրին՝ Ռոստոմը նորից քննարկում է այդ հարցում հայ–մակեդոնական համագործակցության անհրաժեշտության խնդիրը. «...Նախ եւ առաջ յայտնեն, որ տղաները վերադարձել են ողջ եւ առողջ (նկատ ունի հայ–մակեդոնական վերը նշված խառը խմբի վերադարձը Թուրքիայից – Կ. Յ.): Հետները բերել են 16.000 ֆր.: Հիմա, ասում են՝ սկսենք հանգամակութիւն. ով որ մեզ տայ՝ լաւ, ով՝ չտայ, նրանց ցանկը կպատրաստենք ու կյանձնենք մակեդոնացիներին, թող նրանք առնեն:

Մակեդոնացիները այստեղ համարեա թէ բռնի ոյժով դրամ են ժողովում եւ բաւական խոշոր գումարներ: Առնում են ոչ միայն բուլգարներից, այլեւ հրեաներից, նոյնիսկ՝ տաճիկներից: Հայերին չեն դիմում մեր խաթեր՝ այն հաւատով, որ մեզ տալիս են»<sup>4</sup>:

Նույն թվականի օգոստոսի 2–ին գրած նամակում կրկին անդրադառնալով հայ–մակեդոնական համագործակցության խնդրին՝ Ռոստոմը գրում է. «Ռոտելի (բուլղար–մակեդոնացի գործիչ է - Կ. Յ.) հետ տեսնուեցայ: Ընդհանուր համերաշխ գործունէութեան մասին անհոգ եղէք: Ինչպէս արդէն գրել էի՝ դեռ անցեալ տարուանից խօսք են տուել առանց մեզ յայտնելու եւ մեզ հետ խորհրդակցելու՝ բան չանել, եւ քանի որ արդեն

<sup>1</sup> Աճդ, էջ 158:

<sup>2</sup> Ռոստոմ, Նամականի, էջ 192:

<sup>3</sup> Աճդ, էջ 208-209:

<sup>4</sup> Ռոստոմ, Նամականի, էջ 220:

Ծաղիկի (Վիշապի՝ Կ. Պոլսի – Կ. Յ.) մէջ ընդհանուր գործ է սկսուել, ինչու պէտք է դուք կասկածէիք եւ համերաշխութեան հարցը նորից դնէիք:

Ծաղիկի մեր ընկերները նոյնպէս առանց մեզ տեղեկացնելու եւ խորհրդակցելու՝ ոչինչ չեն անում: Դրա վրայ էլ վստահ եմ:

Ուզում էի առիթից օգտուել եւ մակեդոնացի յեղափոխականների համագումարին առաջարկել, որ նա իր կարծիքը յայտնի Տաճկաստանի միւս տարրերու եւ գլխավորապէս երիտթուրքերու վերաբերեալ, եւ եթէ այդ կարծիքը մերիներուն մօտ լինէր, մի ընդհանուր կօչ անել մեր եւ մակեդոնացիներու կողմից՝ տաճիկներուն, յոյներուն եւ միւս տարրերուն: Անհարմար գտան այդ առաջարկը կօնգրեսին ներկայացնելու, բայց առաջարկին համամիտ գտնուեցին: Ռատելը եւս ունեցել է այդ մտադրութիւնը: Այդ բանը կանենք եւ կօչ կխմբագրենք կօմիտէի հետ միասին՝ կօնգրեսից յետոյ»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք, Ռոստոմն իր նամակներուն արտահայտում է այն միտքը, որ անհրաժեշտ է միավորել Օսմանյան ընդդիմադիր բոլոր ուժերին: Հայ–մակեդոնական համագործակցության մասին խոսվում է նաև Ռոստոմի հետագա նամակներուն: Հատկապէս 1900 թ. օգոստոսի 7–ի նամակում նա քննարկում է համատեղ զենք ձեռք բերելու հնարավորության հարցը. «Ռուսաստանում կառավարութիւնը վաճառման է հանում բերդան հրացանները: Եթէ գնել հնարաւոր է ուզածդ քանակութեամբ, աշխատեցէք շուտով իմանալ այդ բանը, նոյնպէս եւ հրացանի գինը եւ այլ պայմանները: Այստեղից կարող է գնալ մի վաճառական, գնել եւ բերել: Սահմանագծի որոշ կետերում մակեդոնացիք մարդիկ ունեն, որ կարող են դուրս հանել ապրանքները առանց դժուարութեան: Այս խնդիրը անուշադիր չթողնէք: Սա էլ մեր կողմից մի ծառայութիւն կլինի մակեդոնական կօմիտէին նրանց արած բազմաթիւ ծառայութիւնների փոխարէն: Բացի այդ, այդ հրացաններից կարող ենք օգտուել եւ մենք Կիլիկիա կամ նոյնիսկ Կ. Պոլիս տանելով: Մակեդոնացիք առաջարկում են Կ. Պոլսում հրացաններով էլ գործել. վատ չէր լինի»<sup>2</sup>:

Նույն թվականի հոկտեմբերի 15–ին գրած նամակում Ռոստոմը ավելացնում է. «Ստացուած է 10.650 լև դրամ եւ 1500 լևի ռազմամթերք ՅՅԴ եւ մակեդոնական կօմիտէների ընդհանուր պէտքերի համար»<sup>3</sup>:

1901 թ. փետրվարի 15 –ի նամակում Ռոստոմը կրկին քննարկում է բուլղարների հետ միասին զենք ձեռք բերելու հարցը. «...Կապրովայի բուլղարը, որ պէտք է մեզ տար 82 հրացան՝ փոխարէնը առնելով 1–1 ոսկի, այլեւս չի կարողանում: Ընդհանուր պատրաստ է հիմա 30 հրացան, որ պատրաստ է մեզ տայ առանց որելէ մի բան առնելու: Սակայն, կարող է եւ չտալ, որովհետեւ ոստիկանութիւնը նոյն աչքով չի նայում մակեդոնացիներին: Ուզենք–չուզենք, պիտի համաձայնենք այդ 30 հրացանը հետ առնելու»<sup>4</sup>:

Նույն՝ 1901 թ. հունիսի 6–ին հայ–մակեդոնական հայդուկային միացյալ մի խումբ Ադրիանապոլսում (Էդիրնէ) հարձակում է գործում Մուստաֆա բէյի ազարակի վրա՝ այստեղ հյուր գտնվող Էդիրնէյի վալիին գերի բռնելու համար, որպէսզի թուրքական կառավարութիւնից որպէս փրկագին պահանջեն հայ և բուլղար մի քանի հեղափոխական-

<sup>1</sup> Աճդ, էջ 222:

<sup>2</sup> Ռոստոմ, Նամականի, էջ 225:

<sup>3</sup> Աճդ, էջ 231:

<sup>4</sup> Աճդ, էջ 241:

ների ազատ արձակումը և որոշ գումար կորզեն<sup>1</sup>: Բայց, «վալին կես ժամ առաջ մեկնած լինելով՝ խուճը իրեն չմատնելու համար բռնում է ազարակի տիրոջ որդուն եւ տանում լեռները...»<sup>2</sup>:

Խուճը, որի կազմում էին ՀՀԴ մարտիկներ դերձակ Օնիկը, թեքիրդաղցի Օնիկը, Թաթուլը, Անտոնը, Կարապետը, բուլղարացի Պետոն, Գևորգը, անմիջապես հարձակման է ենթարկվում թուրք ոստիկանների կողմից: Խուճը սպանելով 3–4 ոստիկան, մի քանի զինվոր և 15 ձի՝ անկորուստ առաջ է շարժվում:

Կառավարությունը իմանալով եղելությունը՝ անմիջապես բազմաթիվ հեծյալ ու հետևակ զինվորներ երկու թնդանոթով ուղարկում է խմբի հետևից՝ խմբի բոլոր անդամներին ձերբակալելու համար<sup>3</sup>: Ընդհարումը տեղի է ունենում քաղաքից 3 կմ հեռու: Ոստիկանները կարողանում են նախապես փակել բոլոր անցքերն ու ճանապարհները: Հեղափոխականներին այլ ելք չէր մնում, քան կատաղի դիմադրություն ցույց տալը: Մինչև վերջին փամփուշտը կռվելով թշնամու տասնյակ անգամ գերազանցող ուժերի դեմ՝ հեղափոխականներից զոհվում են Սոկոլովը, Իվանը (բուլղարներ), թեքիրդաղցի Օնիկը, Անտոնը: Խմբի անդամներից Թաթուլն ու Գևորգը փորձում են քիչ հեռվում առանձին դիրք բռնելով՝ պաշտպանել խմբի թիկունքը: Ոստիկանապետը իր զինվորներին հրամայում է ելնել դիրքերից և գրոհել հայդուկների վրա: Չնայած ցույց տրված հերոսական դիմադրությանը՝ ի վերջո գրեթե բոլոր հայդուկները սպանվում են, իսկ ողջ մնացած հինգ մարտիկները (երեք բուլղար և երկու հայ) վիրավոր վիճակում գերի են բռնվում, որոնց ծեծի ենթարկելով տանում են բանտ:

Թուրք ոստիկանները կորցնում են մի քանի սպա և 70-ից ավելի զինվորներ<sup>4</sup>:

Իր նամակներից մեկում անդրադառնալով 1901 թ. դեկտեմբերին Ադրիանապոլսում բուլղարացի Պետոյի և նրա հայ ու բուլղար զինակիցների կախաղան բարձրացնելու լուրին և դրա արձագանքներին՝ Ռոստոմը գրում է. «...Հարկաւ, արդէն լսած կլինեք, որ Պետոն, Օնիկը եւ իր երեք բուլղար ընկերները կախաղան հանուեցին Էդիրնէյում: Կախաղանի լուրը ահագին իրարանցում առաջ բերեց ամբողջ Բուլղարիայում եւ մասնավորապէս Ֆիլիպէյում: Հոգեհանգիստներ կատարուեցին, ցոյցեր տեղի ունեցան տաճիկ հիւպատոսարանի առջեւ եւ այլուր»<sup>5</sup>:

1901 թ. կեսերին ներքին երկպառակտություն է առաջանում բուլղար–մակեդոնացի հեղափոխականների մեջ, որը բարդացնում է ՀՀԴ–ի հետ նրանց համագործակցության արդյունավետությունը, որի մասին իր նամակներից մեկում Ռոստոմը գրում է. «Մակեդոնացիների գործը շատ խառն է: Ներքին երկպառակտութիւնները զօրեղացել են»: Անդրադառնալով այդ երկպառակտություններին վերջ տալու նպատակով հրավիրված կոնգրեսին՝ Ռոստոմը գրում է. «Կօնգրեսի ելքը ձեզ յայտնի կլինի: Սարաֆօւի կուսակիցների ցանկը չի անցել, իսկ նոր կօմիտէի դիրքը մեր հանդէպ դեռ որոշել չի կարելի: Եթէ բոլորովին խաղաղասիրական լինի, դրա հետեւանքով ներքին կազմակերպութիւնը

<sup>1</sup> Տե՛ս Մազմանեան Վ., Ռոստոմի գործը՝ Պալքաններու մէջ, Պատմագրութիւն Հ. 3. Դաշնակցութեան (քառահատոր շարք), խմբ. 3. Քիւրքչեան, Բ. հատ., Աթէնք, 1991, էջ 111:

<sup>2</sup> Ռոստոմ, Նամակացի, էջ 256:

<sup>3</sup> Տե՛ս Մազմանեան Վ., Ռոստոմի գործը՝ Պալքաններու մէջ, Պատմագրութիւն Հ. 3. Դաշնակցութեան, Բ. հատ., էջ 112:

<sup>4</sup> Տե՛ս անդ:

<sup>5</sup> Ռոստոմ, Նամակացի, էջ 268:

կզօրեղանայ: Արդէն կօնգրէսում որոշուած է, որ գերագոյն կօմիտէն, որն այսուհետեւ կրելու է «Մակեդոնական կօմիտէ» անուանումը, իրաւունք չպէտք է ունենայ խառնուելու երկրի ներքին գործերի մէջ: Նրա գործունէութեան սահմանները Բուլղարիայից դուրս չպէտք է գայ»<sup>1</sup>: Այս ներքին երկպառակտութիւնների, ինչպէս նաև երիտթուրքերի հանդէպ ունեցած բացահայտ անվստահության պատճառով բուլղար-մակեդոնացի հեղափոխականները չմասնակցեցին 1902 թ. փետրվարին կայացած Օսմանյան ընդդիմադիր ուժերի 1-ին համաժողովին:

Մեկ այլ նամակում, անդրադառնալով մակեդոնացի հեղափոխականներ Մերջանովին և Սոկոլովին, Ռոստոմը նրանց մասին գրում է. «Ինտիլիգէնտ յեղափոխականներ էին, նոր ուղղութեան պատկանող՝ լայն հայեացքներով, ազատ զանազան շովինիստական հովերից: Նուիրուած էին գործին բառիս բուն նշանակութեամբ: Կ. Պոլսում եղել են ամենավտանգաւոր գործերում՝ չխորշելով ոչ մի ֆիզիկական ծանր աշխատանքից: Բուլղարիա գալով՝ նրանք չկարողացան ապրել խաղաղ կեանքով. միշտ գործ էին փնտրում: Կ. Պոլսում գործակցել են մերոնց հետ միասին. ջերմ համակիրներ էին համերաշխ գործունէութեան: Վերջին գործին գնացին ինչպէս հարսանիքի»<sup>2</sup>:

Ռոստոմի այս նամակից մեկ անգամ ևս երևում է, որ հայ-մակեդոնական համագործակցության հարցում շահագրգռվածությունը փոխադարձ էր:

1902 թ. «Մակեդոնական շարժում» ֆրանսալեզու երկշաբաթաթերթի խմբագիր Պ. Ս. Ռատըր ելույթ ունենալով Եւրոպայի հայ ուսանողական միության տարեկան համագումարում՝ հուզված անդրադառնում է այն համերաշխ կապերին, որոնք մակեդոնացիներին միավորում են ՅՅԴ-ի հետ և կոչ անում շարունակել ամրապնդել այդ կապերը<sup>3</sup>:

1902 թ. երկրորդ կեսին Թուրքիայի դէմ ապստամբություն է բարձրացնում Մակեդոնիան, որին, սակայն, մակեդոնական հեղափոխական ոչ բոլոր կազմակերպություններն են մասնակցում: Ապստամբական բազմաթիվ խմբեր երկրի հյուսիսային և հարավային կողմերում հանդես գալով՝ ժողովրդին զենքի են կոչում: Շարժման ղեկավարներ են դառնում մակեդոնացի Դելչևը, բուլղար գնդապետ Յանկովը, որն իր ընկերներով ամիսներ շարունակ հարձակումներ է գործում Ռոդոպոյ լեռների և Ռիլոդաղի հարավային լանջերի վրա տեղակայված թուրքական զորքերի վրա՝ բազմաթիվ արյունահեղ ընդհարումներ ունենալով նրանց հետ:

Չեղափոխականները մեծ հույսեր էին կապում Եւրոպայի միջամտության հետ: Բայց, սովորացած և կենտրոնացված թուրքական զորքերը այս անգամ ևս արյան մեջ խեղդում են Մակեդոնիայի ապստամբությունը, հրդեհում և կողոպտում են անպաշտպան գյուղերը, դէպի կախաղան կամ աքսոր են առաջնորդում մակեդոնացի հեղափոխականներին<sup>4</sup>:

Փաստորեն Մակեդոնիան ոչ մի կողմից օգնություն չստանալով՝ պարտվեց ու խեղդվեց արյան մեջ:

<sup>1</sup> Ռոստոմ, Նամականի, էջ 261, 263:

<sup>2</sup> Անդ, էջ 271:

<sup>3</sup> Տե՛ս «Դրօշակ», ապրիլ, 1902, թիւ 4:

<sup>4</sup> Տե՛ս «Դրօշակ», սեպտեմբեր, 1902, թիւ 9:

Անդրադառնալով այս ամենին՝ «Դրօշակը» գրում է. «Ինչպես Երոպական տերութիւնները անտարբեր էին դէպի Չայկական հարցը, այնպես էլ հայ յեղափոխականները անտարբեր գտնուեցին Մակեդոնիայի յեղափոխութեան հանդէպ: Քանի որ, եթէ հանդէս գայինք մակեդոնացիների հետ միասին, մենք կգտնուէինք անհամեմատ ավելի նպաստաւոր իրավիճակում, քանի որ թշնամու ոյժը մեծապէս կջլատուէր: Սակայն հայ հասարակութիւնը, չնայեած բազմաթիւ յորդորներին, այդ ժամանակ չունէր ոյժ եւ պատրաստութիւն՝ հանդէս գալու մակեդոնացիների հետ միասին»<sup>1</sup>: Այնուհետև թերթը կոչ է անում հայերին՝ հետևել մակեդոնացիների օրինակին և սեփական ուժերով ձեռք բերել անկախութիւն:

1902 – 1903 թթ. մակեդոնական հեղափոխութեան պարտութիւնից հետո ժնկ եկած մակեդոնական շարժման նշանավոր դեմքերից Սարաֆովի, Գարվանովի, Լիպպովի, Թյուֆեկչիևի, Չակալարովի և այլոց հետ հաճախակի տեսակցութիւններ և մտերմական զրույցներ էին տեղի ունենում<sup>2</sup>: Չայ և մակեդոնական դատերը անբաժան կերպով ներկայացվում էին եվրոպական հանրութեան կարծիքին:

Չայ և մակեդոնացի հեղափոխականները համագործակցում էին նաև հետագայում: 1904 թ. մարտի 12–ին Լոնդոնում ժողովրդական մեծ ցույց է տեղի ունենում ի օգուտ Մակեդոնիայի և Չայաստանի շահերի պաշտպանութեան: Բալկանյան կոմիտէի նախաձեռնութեամբ կազմակերպված այդ ցույցին խոսվում է Մուշի վերջին դեպքերի, հայ հեղափոխականների գործունեութեան, ինչպես նաև հայ և մակեդոնացի հեղափոխականների համագործակցութեան հարցի շուրջ<sup>3</sup>:

1903 – 1904 թթ. Սասունի ապստամբներին օգնելու համար Ֆիլիպէյի ՉՅԴ կոմիտեն Ռոստոմի անմիջական ղեկավարութեամբ որոշում է Ֆիլիպէյի հարուստ հայերի շրջանում հանգանակութիւն ձեռնարկել, որին շատերը հոժարակամ մասնակցում են, բայց վաճառական Յաղուբը հրաժարվում է որևէ գումար տալուց: Ռոստոմի կարգադրութեամբ նրան երթարկում են դաժան ծեծի: Գործին միջամտում է Սոֆիայի հատուկ քննչական բաժանմունքը, բայց Բորիս Սարաֆովի միջամտութեամբ այս քրեական գործը կարճվում է, իսկ ծեծին մասնակից հայերը հեռանում են Բուլղարիայից<sup>4</sup>:

Օսմանյան ընդդիմադիր ուժերի, այդ թվում նաև բուլղար–մակեդոնացիների հետ համագործակցութեան խնդրին է անդրադառնում նաև 1904 թ. փետրվարին Սոֆիայում կայացած ՉՅԴ III ընդհանուր ժողովը՝ ընդունելով հետևյալ որոշումը. «Շարունակել թիւրքահպատակ այլ եւ այլ տարրերի (թիւրքեր, քիւրդեր, լիբանանցիներ, մակեդոնացիներ եւ այլն) համերաշխ գործակցութեան տակտիկան՝ հանձնարարելով բոլոր պատասխանատու մարմիններին, Բիւրօներին եւ Կեդրօնական կօմիտէներին ըստ տեղական հանգամանքների՝ գործնականապէս մշակել բաղձալի մերձեցման պահանջը այդ տարրերի հետ»<sup>5</sup>:

<sup>1</sup> «Դրօշակ», նոյեմբեր, 1903, թիւ 9:

<sup>2</sup> Տե՛ս Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 217-218:

<sup>3</sup> Տե՛ս «Դրօշակ», մարտ, 1904, թիւ 3:

<sup>4</sup> Տե՛ս Պետիկեան Ա., նշվ. աշխ., «Չայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1933, թիւ 12, էջ 105:

<sup>5</sup> Նիւթեր..., Բ. հատ., էջ 118:

Այդ շրջանում Բուլղարիայի բազմաթիվ բնակավայրեր կենտրոնատեղիներ էին դարձել հայ հեղափոխականների համար, որտեղ նրանք ազատորեն առաջ էին տանում իրենց հեղափոխական գործը: Բուլղարիայում գործում էին հայ քաղաքական կուսակցությունների կոմիտեներ, կազմակերպություններ, որոնք ունեին իրենց տպարանները, հրատարակում էին պարբերականներ, հեղափոխական բովանդակությամբ գրքեր և գրքույկներ: Հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները սերտ շփումների մեջ էին Բուլղարիայի քաղաքական գործիչների, առանձին դեպքերում նաև՝ կառավարական անձանց հետ<sup>1</sup>:

Բուլղարական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները, անձամբ Ֆերդինանդ թագավորը և վարչապետ Ռադոսլավովը չտեսնելու էին տալիս իրենց երկրում հայ հեղափոխականների զինական աշխատանքները, իսկ առանձին դեպքերում հնարավոր միջոցներով օժանդակում էին նրանց<sup>2</sup>:

Բուլղարիայում հայերը նաև հնարավորություն ունեին պատրաստելու զենքեր, փամփուշտներ, ռումբեր, իսկ 1901 թվականից սկսած հայերն ու մակեդոնացիները Բուլղարական կենտրոնական կառավարության թույլտվությամբ ձեռք են բերում հրացանաձգությամբ զբաղվելու իրավունք: Հրացանաձգությունները տեղի էին ունենում պետական-զինվորական հրացաններով՝ բուլղար զինվորականների հսկողությամբ: Այս զինավարժություններն ու զենքի փորձարկումները տեղի էին ունենում երկրի բազմաթիվ վայրերում<sup>3</sup>:

Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների հետ գործնական համագործակցություն տեղի ունեցավ նաև 1904–1905 թթ., երբ ՀՅԴ 4–րդ ընդհանուր ժողովի հանձնարարությամբ և Էլլենի (Քրիստափոր Միքայելյան) ղեկավարությամբ մահափորձ էր նախապատրաստվում սուլթան Աբդուլ Համիդի դեմ, իսկ երբ 1905 թ. մարտի 17-ին Վիտոշ լեռան լանջին ձեռնառումների փորձարկման ժամանակ զոհվեցին Քրիստափոր Միքայելյանն ու Վռամշապուհ Քենդիրյանը, բուլղարական ոստիկանությունը դիտավորյալ մի քանի ժամ հետո մտավ հյուրանոցի՝ Քրիստափոր Միքայելյանի սենյակը՝ ժամանակ տալով հայ հեղափոխականներին, որ այնտեղից դուրս բերեն զինամթերքն ու փաստաթղթերը: Իսկ Քրիստափորի հուղարկավորությունը տեղի ունեցավ մեծ հանդիսավորության պայմաններում՝ բուլղար-մակեդոնացի հեղափոխականների անմիջական մասնակցությամբ<sup>4</sup>:

1905–1906 թթ. Օսմանյան կայսրության երոպական մասի ոչ թուրք, քրիստոնյա ազգաբնակչության հակասուլթանական տրամադրություններն այն աստիճանի են խորանում, քաղաքական անցուդարձերն այնպիսի արագությամբ են հաջորդում մեկը մյուսին, որ 1906 թվականին պատրաստ էր համագործակցության և միության հողը: Այս ամենը հաշվի առնելով՝ Հ. Յ. Դաշնակցությունը որոշեց համաժողովի հավաքել Բալկանյան հեղափոխական կոմիտեների ներկայացուցիչներին: «Դրօշակ»-ի խմբագրության

<sup>1</sup> Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Ա. գիրք, Երևան, 1996, էջ 239-240:

<sup>2</sup> Տե՛ս անդ, էջ 280:

<sup>3</sup> Տե՛ս Պետիկեան Ա., նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1933, թիւ 12, էջ 102:

<sup>4</sup> Տե՛ս անդ, էջ 106-107:

նախաձեռնությամբ այդ ուժերն անցկացրին նախապատրաստական ժողովներ և ընտրեցին պատվիրակներ<sup>1</sup>:

1906 թ. դեկտեմբերի սկզբին ժնկում տեղի ունեցավ նախատեսված համաժողովը, որին մասնակցում էին հույն, մակեդոնացի, բուլղար, սերբ, բոսնիացի, հերցեգովինացի և հայ հեղափոխական կոմիտեների ներկայացուցիչները: Համաժողովը միաձայն ընդունեց մի բանաձև, որն ըստ էության կոչ էր բալկանյան և փոքր ասիական ժողովուրդներին: Այդ բանաձևն ունի հետևյալ բովանդակությունը՝ «1. Հրաժարվել ներքին պառակտումներից եւ փոխադարձ թշնամութիւններից, որը թշնամու հաջողութեան հենակետն է եղել մինչեւ այժմ, 2. Միացեալ եւ ներդաշնակ ոյժերով կռիւ մղել թիւրքական ռեժիմի դէմ, 3. Ամէն կերպ իրագործուած տեսնել Մակեդոնիայի, Հայաստանի եւ Բոսնիա-Հերցեգովինայի ինքնավարութիւնը, ինչպէս նաեւ Բալկանեան մանր պետութիւնների դաշնակցութիւնը, 4. Պահանջվում է արմատական փոփոխութիւններ եւ Սահմանադրական կարգերի հաստատում Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդների համար՝ իբրեւ մի դրական միջոց՝ բարելավելու համար նրանց դժոխային վիճակը, 5. Հորդորել բոլոր յեղափոխական ոյժերին՝ շարունակելու սկսված ազատագրական կռիւը՝ առանց տատանման, միացեալ ոյժերով, համոզված, որ բարբարոս ռեժիմը մոտենում է իր վախճանին»<sup>2</sup>:

Ժողովը նաև որոշում ընդունեց նույն ամսվա վերջին ժնկում կազմակերպել և հրավիրել հրապարակային խոշոր հանրահավաք և մասնակցության հրավեր ուղարկել Ֆրանսիայի երկու ականավոր գործիչներին՝ Ժան Ժորեսին և Ֆրանսիս դը Պրեսանսեին: Նախատեսվեց, որ ժնկում կայանալիք հավաքը պետք է շարունակություն ունենա բալկանյան այլ կենտրոններում<sup>3</sup>: Ժան Ժորեսի և Ֆ. Դը Պրեսանսեի մասնակցությունը այդ հավաքին հնարավոր չէր զուտ ֆիզիկական պատճառով, ուստի հավաքը հետաձգվեց մինչև 1907 թ. հունվար, բայց այդպես էլ չկայացավ<sup>4</sup>:

Հայ-բուլղար-մակեդոնական համագործակցության գործնական արդյունքներից էր նաև ՀՀԴ Ջինվորական դպրոցի հիմնումը Բուլղարիայում 1906 թ. նոյեմբերին:

Դեռևս Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունից հետո Հ. Յ. Դաշնակցությունը իր առջև նպատակ էր դրել բացել մի զինվորական վարժարան, որտեղ կարելի էր մարզել հայ երիտասարդներին: Ջինվորական դպրոցի ստեղծումը կարևորում էր նաև Անդրանիկը, որն այդ մասին ասել է. «Երկիր գնացած զինուորներից մեծ մասը զենքի վարժ եղած չեն: Շատերը նրանցից նոյնիսկ չեն իմացել հրացանի մասնատելն ու հաւաքելը: Այս տեսակետից զինուորական դպրոցը կարելու էր մեզ համար»<sup>5</sup>: Նման դպրոցի ստեղծման խնդիրն էր լինելու հմուտ զինվորական ուժեր հասցնել Արևմտյան Հայաստանի հեղափոխության համար: Նման դպրոց կարելի էր ստեղծել միայն Բուլղարիայում: Ջինվորական դպրոցն այստեղ բացելու միտքը հղանում է Ռոստոմը: Սակայն անհրաժեշտ էր ստանալ Բուլղարիայի իշխանությունների համաձայնությունը: Այդ նպատակով ՀՀԴ Սոֆիայի Կ. կոմիտեն դիմում է կառավարական մարմիններին: Գործը զլուխ բերելու

<sup>1</sup> Տե՛ս Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք III, Երևան, 2009, էջ 205:

<sup>2</sup> «Դրօշակ», դեկտեմբեր, 1906, թիւ 12:

<sup>3</sup> Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, էջ 206:

<sup>4</sup> Տե՛ս անդ:

<sup>5</sup> Նիւթեր..., Գ. հատ., Պէյրուք, 1976, էջ 60:

համար Սոֆիա է գալիս Ռոստոմը: Այստեղ մակեդոնական հեղափոխականների ղեկավարները կազմակերպում են նրա հանդիպումները Բուլղարիայի իշխանությունների ներկայացուցիչների հետ<sup>1</sup>:

Ռոստոմի՝ Բորիս Սարաֆովի (բուլղար հեղափոխական գործիչ է, - Կ. Յ.) հետ տեսակցության ժամանակ վերջինս առաջարկում է զինվորական դպրոց ստեղծելու փոխարեն 20 հոգու իր միջնորդությամբ ընդունել տալ Սոֆիայի պետական դպրոց և 400 հայ երիտասարդների ծառայության վերցնել Բուլղարական բանակում որպես հասարակ զինվոր: Բայց, բուլղարերեն չիմանալու և մի շարք այլ պատճառներով պայմանավորված՝ այս առաջարկը մերժվում է: Մի քանի խորհրդակցություններից հետո ՅՅԴ-ն որոշում է բացել սեփական դպրոց<sup>2</sup>:

Երբ Անդրանիկը 1905 թ. մարտին ժնկից եկավ Բուլղարիա և տեղեկացավ դպրոցի ստեղծման գաղափարին՝ անմիջապես հավանություն տվեց: Բայց, դեռևս պարզ չէր Բուլղարական կառավարության դիրքորոշումը: Այն պարզելու և համաձայնություն ստանալու համար Անդրանիկը մի շարք հանդիպումներ է ունենում բուլղար զինվորական բարձրաստիճան ղեկավարների հետ և ի վերջո ստանում է նրանց բանավոր համաձայնությունը, որի մասին հաղորդում է ժնկ՝ ՅՅԴ Արևելյան Բյուրո՝ Խաչատուր Մալումյանին (եղուարդ Ակնունի): Դպրոցը բացվելու էր բուլղարական զինվորական նախարարության տնօրինության ներքո: Հաստատության ընդհանուր ղեկավարությունը իրականացնելու էր ՅՅԴ Բալկանյան կենտրոնական կոմիտեն՝ Ստեփան և Թագվոր Խինկյանների միջոցով: Դպրոցը նախատեսված էր 50 ուսանողի համար, որոնց ուսուցումը կազմակերպվելու էր Բուլղարիայի սպայից վարժարանի հատուկ ծրագրով: Դասընթացները տևելու էին 10 ամիս: Մինչև 1907 թ. հունիս ամիսը անցկացվելու էին տեսական պարապմունքներ, այնուհետև լեռներում սկսվելու էին գործնական պարապմունքներ՝ զինավարժություններ, որոնք տևելու էին մինչև սեպտեմբեր<sup>3</sup>:

Բուլղարական կառավարությունը իր երկրում նման հաստատության ստեղծման արտոնություն տվեց միայն հետևյալ պայմաններով՝ 1. Ձինվորական դպրոցի գոյությունը խիստ գաղտնի պետք է պահվի թուրքական իշխանություններից, օտարերկրյա հետախուզություններից, տեղական հասարակությունից և մամուլի օրգաններից, 2. Տեղացի բնակչության ուշադրությունը չգրավելու համար դպրոցի ուսանողությունը պետք է կրեր բուլղարական բանակի զինվորական համազգեստ, 3. Թուրքիայի և Բուլղարիայի միջև պատերազմ սկսվելու դեպքում հայերը հնարավորության սահմաններում պետք է աջակցեին բուլղարներին: Երկար բանակցություններից հետո բուլղարական կողմը համաձայնվեց նաև մինչև դպրոցի բացումը 400 հայ երիտասարդների ընդունել բուլղարական բանակի շարքերը՝ նրանց ձրիաբար զենքի խնամքին ու գործածությանը վարժեցնելու համար: Սրանից բացի Բուլղարիայի սպայից վարժարանում ձրիաբար կրթվելու էին 20 հայ երիտասարդներ<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Սիմոնյան Յր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երևան, 2003, էջ 494:

<sup>2</sup> Տե՛ս Մատթոսի յուշատետրեն, գրեց՝ Մատթոս Մինասեան, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1958, թիւ 7, էջ 67-68:

<sup>3</sup> Տե՛ս Նիւթեր..., Գ. հատ., էջ 60:

<sup>4</sup> Սիմոնյան Յր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, էջ 497:

Երկար նախապատրաստական աշխատանքներից հետո դպրոցը բացվեց 1906 թ. նոյեմբերին: Դասընթացներին մասնակցում էին 27 հոգի, որոնցից շատերը գրել-կարդալ չգիտեին: Զինվորական պարապմունքներն ու դպրոցի կազմակերպական հարցերը սկզբում տնօրինում էր միայն սպա Ռաշիդը, որին ղեկտեմբերի 5-ից միանում է բուլղարական բանակի կապիտան Պողոս Պողոսյանը, ավելի ուշ՝ նաև բուլղարական բանակի ենթասպա Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Յարությունյան)<sup>1</sup>:

Դպրոցում ուսուցանվում են մի շարք առարկաներ՝ հետախուզություն, վիրաբուժություն, ռազմավարություն, դաշտային ծառայություն, ներքին ծառայություն, աղմինիստրացիա, հրետանի, խրամատաշինություն, զինվորական պատմություն, աշխարհագրություն, հեղափոխության պատմություն, հայոց պատմություն, պայթուցիկ նյութեր, զինվորական շրջանի կազմակերպում, հրացանաձգություն, մանկավարժություն և այլն: Շուտով զինվորական դպրոցում սովորող ուսանողների թիվը եռապատկվում է Արևմտյան Հայաստանից, Եգիպտոսից, Ռուսաստանից և այլ տեղերից եկած ուսանողներով և հասնում 80-ի<sup>2</sup>:

Վարժարանի ծախսերը հոգում էր ՀՀԴ Բալկանյան Կենտրոնական կոմիտեն, որը ստեղծվել էր 1897 թ. և արդեն ընդարձակ ճյուղավորումներ ուներ Բուլղարիայի 30.000-անոց հայ գաղութի մեջ<sup>3</sup>:

Թվում է, թե գործը հունի մեջ է մտնում, բայց, 1906 թ. վերջին ՀՀԴ Բալկանյան Կ. կոմիտեի համար պարզ է դառնում, որ դպրոցի տեղը սխալ է ընտրված, որի մասին նախապես բազմիցս նախազգուշացրել էին բուլղար հեղափոխական գործիչները: Նախ Դուբնիցայի շրջանը գտնվում էր հայ ժողովրդի մեծ բարեկամ Բորիս Սարաֆովի հակառակորդ Սանդանսկու գլխավորած կազմակերպության ազդեցության տակ, երկրորդ, որն առավել անցանկալի էր, Ռելա վանքը գտնվում էր թուրքական սահմանից ոչ հեռու:

Զնայած զինվորական դպրոցը գաղտնի պահելու համար ձեռնարկվել էին հարկ եղած միջոցները, սակայն թուրքական հետախուզությունը շուտով պարզեց դպրոցի գոյությունը: Սոֆիայի թուրք դիվանագիտական ներկայացուցիչը իր կառավարության անունից ազդու ծածկագիր ներկայացրեց բուլղարական կառավարությանը և կտրականապես պահանջեց փակել դպրոցը<sup>4</sup>:

Դպրոցի գոյությունը դուրս չէր մնացել նաև ռուսական հետախուզության տեսադաշտից: Ռուսական իշխանությունները նույնպես հնարավոր միջոցներով փորձում էին խափանել դպրոցի աշխատանքները, դիվանագիտական խողովակներով ճնշում էին գործադրում բուլղարական կառավարության վրա՝ պահանջելով փակել այն<sup>5</sup>:

Բուլղարական իշխանությունները սկզբում ժխտում են, որ դպրոցը գործում է հայ հեղափոխական կոմիտեի ենթակայության տակ, ստեղծում են «դպրոցը փակելու» իմիտացիա՝ կատարելով խուզարկություններ՝ նախօրոք զգուշացնելով դպրոցի ղեկավարությանը, որպեսզի թաքցնեն ամեն մի կասկածելի բան: Խուզարկություններից մեկի

<sup>1</sup> Տե՛ս Մատթեոսի յուշատետրերն, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1958, թիւ 7, էջ 68:

<sup>2</sup> Տե՛ս Մատթեոսի յուշատետրերն, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1958, թիւ 7, էջ 68-69:

<sup>3</sup> Տե՛ս Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 216:

<sup>4</sup> Տե՛ս Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, էջ 500:

<sup>5</sup> Անդ:

ժամանակ ուստիկանությունը նույնիսկ կեղծ ձերբակալություններ է կատարում: 1907 թ. փետրվարի 26–ին ունկընդիրներից 34–ը հեռացան մոտակա անտառը, իսկ 10-15-ը մնացին սենյակներում՝ իբրև «մակեդոնական յեղափոխականներ»: Սրանք ձերբակալվեցին ու տարվեցին Դուբնիցա, բայց 2-3 օր հետո ազատվեցին ու վերադարձան դպրոց: Այս ամենի նպատակն էր ցույց տալ թուրքական կառավարությանը, որ բուլղարական կառավարությունը իր երկրի տարածքում հետապնդում է հեղափոխականներին<sup>1</sup>:

Ի վերջո բուլղարական կառավարությունը տեղի տվեց թուրքական և ռուսական ճնշումներին: Մարտի 24-ին բուլղարական բանակի հրամանատարությունից հեռագիր ստացվեց, որով պահանջվում էր փակել դպրոցը և անմիջապես հեռանալ: «Ուրեմն բուլգար կառավարութիւնը մեզ վճնդում է՝ երեւի մոռանալով իր ժողովրդի կրած երեկւ տանջանքները»<sup>2</sup>, - ասում էր կապիտան Պողոս Պողոսյանը:

Բայց, Բուլղարական կառավարությունը ոչ թե փակեց դպրոցը, այլ կարգադրեց այն փոխադրել թուրքական սահմանից հեռու գտնվող Ռոդոմետի շրջանի Փելովա վանքը: Մարտի 27-ին չորս սայլ և ութ ձի իրար բարձած՝ սկսվեց տեղափոխությունը: Բեռները նոր վայր հասան ապրիլի 9-ին<sup>3</sup>:

Ռելա վանքի կալվածքում մնացին դպրոցի գույքի հիմնական մասը, ինչպես նաև սաների համար ամբարված սննդամթերքի պաշարները: Ռաշիդը, որ 1906 թ. նոյեմբեր – 1907 թ. մարտ ամիսներին վարել էր դպրոցի տնօրենի և գլխավոր մարզիչի պաշտոնը, բանակցությունների մեջ մտնելով մակեդոնական շարժման աջ թևի ղեկավարներից Վանչո Միահիլովիի հետ, ամբողջ գույքը և սննդամթերքը վաճառում է նրան ու անհետանում: Թեև Սոֆիայի ՀՅԴ Կ. կոմիտեն վճիռ կայացրեց ահաբեկել ծանր զեղծում կատարած խարդախին, բայց բոլոր փնտրտուքներն անցան ապարդյուն<sup>4</sup>:

Մոտ 10 ամսվա համար նախատեսված դպրոցը ևս երկու ամիս մի կերպ շարունակելով իր գործունեությունը Փելովա վանքում, փակվեց քաղաքական աննպաստ պայմանների հարկադրանքի տակ: Իր կարճատև գոյության ընթացքում դպրոցը մեծ դեր ունեցավ՝ տալով շատ անհրաժեշտ զինվորական կադրեր: Այնտեղ պատրաստված տասնյակ հրամանատարներ ուղարկվեցին Անդրկովկաս և Արևմտյան Հայաստան:

ՀՅԴ Բալկանյան կենտրոնական կոմիտեի 1907 թ. հունվար-օգոստոս կիսամյա տեղեկագրի մեջ ասված է, որ չնայած առանձին թերություններին, «վարժարանի արդիւնքը գոհացուցիչ եղաւ: Աշակերտ-ընկերները զինուորական վարժութեանց, նշանառութեանց, եւ գործնական ու տէսական դասերու մեջ այնքան յաջողութիւն ցոյց տուած են, որ նոյնիսկ արժանացած են բարձրաստիճան զինուորականութեան հիացման»<sup>5</sup>:

1907 թ. սկզբներից չափազանց լարվում են Հունաստանի և Բուլղարիայի հարաբերությունները, քանի որ երկու երկրներն էլ հավակնություններ ունեին դեռևս թուրքական տիրապետությունից չազատագրված Մակեդոնիայի նկատմամբ: Ամբողջ 1907 թվականի ընթացքում և հետագայում էլ Հ. Յ. Դաշնակցությունը «Դրօշակի» միջոցով բազ-

<sup>1</sup> Տե՛ս Մատթեոսի յուշատետրէն, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1958, թիւ 7, էջ 69:

<sup>2</sup> Աճղ, էջ 70:

<sup>3</sup> Տե՛ս անդ, էջ 70-71:

<sup>4</sup> Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, էջ 502:

<sup>5</sup> Նիւթեր... Գ. հատ., էջ 137:

միցս համերաշխության կոչեր ուղղեց ինչպես երկու կողմերին, այնպես էլ ողջ ընդդիմադիր տարրերին<sup>1</sup>:

1907 թ. Դ. 3. Դաշնակցությունը և մակեդոնացի հեղափոխականները մեկտեղ հիշատակագիր ներկայացրին Հաագայի վեհաժողովին՝ հայկական և մակեդոնական հարցերի քննության առթիվ<sup>2</sup>:

Նույն թվականի մարտի 26 –ին Բուքրեշից գրած նամակում անդրադառնալով հայ-մակեդոնական համագործակցության խնդրին՝ Ռոստոմը գրում է. «Բօրիս Սարաֆօւը մեր աչքում պէտք է մնայ միջնորդ մեր եւ բուլգարական կառավարութեան միջեւ: Մակեդոնացիք շուտով կունենան իրենց կօնգրեսը, ուր շատ անախորժութիւններ են սպասուում: Համենայն դէպս այդ կօնգրեսից յետոյ մեզ անհրաժեշտ է լաւ ծանոթանալ իրերի դրութեան հետ եւ ըստ այդմ որոշել մեր դիրքը թէ՛ կառավարութեան, եւ թէ՛ կուսակցութեան հանդէպ: Ընդհանրապէս շատ դժգոհ են արդի ղեկավարներից: Նոյնիսկ Լիապօւը, որն ամէնամաքուրն է համարվում, ներկայ կօմիտէի անդամներին համարում է ոչ վստահելի»<sup>3</sup>:

Այս նույն ժամանակ հայ-մակեդոնական համագործակցության խնդրին է անդրադառնում 1907 թ. փետրվարի 22 –ից մայիսի 4–ը Վիեննայում գումարված ՀՅԴ IV ընդհանուր ժողովը: Այն քննարկման է դնում «Թիւրքիոյ ընդդիմադիր տարրերի հետ համերաշխութեան» բանաձևը<sup>4</sup>: Հարցի վերաբերյալ ընդհանուր ժողովը կայացնում է հետևյալ որոշումը՝ «1. ՀՅԴ բոլոր մարմիններին հանձնարարել ամէն կերպ աջակցել թիւրք ժողովրդի ընդդիմադիր տարրերին, 2. Ղեկավարել նրանց սուլթանական ռեժիմի դէմ պայքարում, 3. Ամէն կերպ աշխատել սկիզբ դնել համերաշխ գործակցութեան եւ առաջ բերել համերաշխութեան մարմիններ, 4. Նախապատրաստական բանակցութիւններ սկսել թիւրք յեղափոխականների եւ այլ ընդդիմադիր տարրերի ու խմբակցութիւնների հետ, որոնց քաղաքական հայացքներն ու սկզբունքներն ավելի մօտ կ'լինեն ՀՅԴ սկզբունքներին, 5. Ձգտել համերաշխութիւն առաջ բերել թիւրքերի եւ այլ ազգութիւնների, յեղափոխական կուսակցութիւնների եւ ընդդիմադիր այլ տարրերի միջեւ, 6. Այդ տարրերից կազմել յեղափոխական դաշնութիւն ֆեդերատիւ սկզբունքի վրայ հիմնուած քաղաքական ծրագրով, որը կ'ապահովի բոլոր ազգութիւնների իրաւունքները, 7. Այս գաղափարների իրականացման համար առաջին իսկ պատեհ առիթով հրաւիրել համաժողով վերոյիշեալ բոլոր ընդդիմադիր ոյժերի մասնակցութեամբ, 8. Անել յայտարարութիւն, որ ՀՅԴ – ն Թիւրքիայի մէջ չունի անջատողական ձգտումներ, այլ իր նպատակն է Օսմանեան կայսրութեան բոլոր ազգերի կատարեալ հաւասարութիւնը եւ տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայէթներում վարչական ինքնավարութեան հաստատումը, որը չի հակասի միւս ազգութիւնների իրաւունքներին»<sup>5</sup>: ՀՅԴ IV ընդհանուր ժողովը միաժամանակ որոշում է նաև՝ «1. Բուլգարիա ուղարկել երկու ընկեր, որոնք Բուլգարիայի կեդրոնական կօմիտէի ներկայացուցիչներու հետ տեղում

<sup>1</sup> Տե՛ս Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, էջ 207-208:

<sup>2</sup> Տե՛ս Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 217:

<sup>3</sup> Ռոստոմ, Նամականի, էջ 421:

<sup>4</sup> Տե՛ս Նիւթեր... Գ. հատ., էջ 247-248:

<sup>5</sup> Նիւթեր... Գ. հատ., էջ 304-305:

ծանօթանալով զինուորական դպրոցի մէջ տեղի ունեցած դժգոհութիւններին՝ Արեւմտեան բիւրօյի պատասխանատուութեանը ենթարկել այդ դժգոհութիւնների պատճառ եղողներին, կարգի բերել դպրոցի դասընթացը, դրամական վիճակը եւ գօրծերը, 2. Նոյն ընկերներին հանձնարարել՝ խստօրէն քննել շրջանի կազմակերպական գօրծը եւ կարգի բերել՝ արդիւնքի մասին տեղեակ պահելով Արեւմտեան եւ Արեւելեան բիւրօներին<sup>1</sup>, 3. Ոյժ տալ Օսմանեան ընդդիմադիր միւս տարրերի քարոզչութեանը՝ թիւրք ժողովրդի մէջ տարածելով նրանց հրատարակութիւնները, 4. Հրահանգել ՀՅԴ տեղական մարմիններին՝ ամէն կերպ աջակցել այդ աշխատանքներին»<sup>2</sup>:

Անդրադառնալով ՀՅԴ IV ընդհանուր ժողովի ընդունած որոշումներին՝ «Դրօշակ»-ը գրում է. «Հայ-մակեդոնական գործակցութիւնը իրագործուելու վրայ է, իսկ անցեալում Հ. Յ. Դաշնակցութիւնը իր շարքերում ունեցել է քիւրդեր եւ թիւրքեր՝ իբրեւ կռուող եւ գաղտնի գործիչներ: Բայց դրանք եղել են միայն առանձին անհատներ, իսկ այսօր նոր դարաշրջան է սկսուում Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդների համար, եւ հեռու չէ այն օրը, երբ սուլթանական բռնակալութիւնը պէտք է տեղի տայ Օսմանեան ժողովուրդների միացած գրոհին»<sup>3</sup>:

Սակայն մակեդոնացի հեղափոխականների ներքին տարածայնությունների, իսկ այնուհետև Ռոստոմի Բուլղարիայից հեռանալու հետևանքով թուլանում է հայ-բուլղար-մակեդոնական համագործակցությունը: Այդ է վկայում նաև Ռոստոմի նույն թվականի հունիսի 3 –ին գրած նամակը. «Տեսնուեցանք Ալլեռի (մակեդոնական կոնգրեսի պատգամավոր – Կ. Հ.) հետ եւ բավական երկար: Ազգային խնդրի առթիւ մէջները անհամաձայնութիւններ կան: Շատ են նեղուում չեխերից, որոնք շատ են եւ բավականին թունդ ազգայնականներ: Կան մութ կետեր, որոնց վերաբերմամբ դեռ իրենց տակտիկական չեն որոշել: Առհասարակ այդքան պատգամաւորներ ունենալը բաւականին նեղ կացութեան մէջ է գցել սրանց: Առայժմ որոշել են քաղաքական եւ տնտեսական խնդիրներում միասին լինել, իսկ եթէ ազգայնական խնդիրներ ծագեն՝ թողնելու են, որ ամէն մի խումբ ինչպէս ուզում է, այնպէս էլ ձայն տայ»<sup>4</sup>:

Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների ներքին տարածայնությունները հանգեցնում են եղբայրական սպանությունների: Այսպես, 1907թ. նոյեմբերի 12–ին Սոֆիայի մէջ սպանվում են մակեդոնական ներքին կազմակերպության ամենից տաղանդավոր երկու ղեկավարները՝ Բորիս Սարաֆովը և Յուվան Գարվանովը: Եղբայրասպանության նման դեպքերը ավելի մեծ չափերով շարունակվում են նաև հետագայում: Այս զույգ սպանությունները, որոնք կատարվել էին Սանդանսկու գլխավորած վոևոդաների անարխիստական կուսակցության կողմից, մեծ հուզում են առաջացնում Բուլղարիայում և մասնավորապես Ֆիլիպեյում: Բ. Սարաֆովի և Յ. Գարվանովի հուղարկավորությանը մասնակցելու համար Հ. Յ. Դաշնակցությունը Կալկաթայից անմիջապես Սոֆիա է ուղարկում Ռուբեն Զարդարյանին և Անդրանիկ Օզանյանին<sup>5</sup>: Անդրանիկը, որ իր

<sup>1</sup> Անդ, էջ 254:

<sup>2</sup> «Դրօշակ», մայիս, 1907, թիւ 5:

<sup>3</sup> «Դրօշակ», սեպտեմբեր, 1907, թիւ 9:

<sup>4</sup> Ռոստոմ, Նամականի, էջ 423-424:

<sup>5</sup> Տե՛ս Պետիկեան Ա., նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1933, թիւ 1, էջ 121, տե՛ս նա՛և Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա., էջ 316:

իր կյանքում շատ կորուստներ էր ունեցել, հետագայում խոստովանել է, որ իր կրած ամենացավալի կորուստները եղել են Գևորգ Չավուշի և Բորիս Սարաֆովի մահը:

Թեև Անդրանիկի՝ Բուլղարիայում հաստատվելուց հետո դարձյալ որոշակի աշխուժություն է նկատվում հայ-բուլղար-մակեդոնական համագործակցության բնագավառում, սակայն 1907 թ. վերջերից, երբ ՅՅԴ –ն նախապատրաստական լուրջ աշխատանքներ էր տանում Օսմանյան ընդդիմադիր ուժերի 2–րդ համաժողովի հրավիրման ուղղությամբ, մակեդոնացի հեղափոխականները հրաժարվեցին մասնակցել նույն թվականի դեկտեմբերի 27–29–ը Փարիզում գումարված համաժողովին, որից հետո հայ-բուլղար-մակեդոնական համագործակցությունը առժամանակ դադարեց:

Այնուհանդերձ, Հայ-բուլղար-մակեդոնական համագործակցության արդյունքում հայ հեղափոխականները ձեռք բերեցին՝ 1. Բուլղարիայի տարածքում ազատ երթևեկելու, զենք և զինամթերք պահելու, զինավարժություններ անելու, հեղափախական ղեկավար ուժեր պատրաստելու և այլ արտոնություններ, 2. Բուլղարական կառավարության օժանդակությամբ ՅՅԴ–ն թեև կարճ ժամանակով (1906–1907 թթ.), այնուհանդերձ Բուլղարիայի տարածքում կարողացավ բացել ռազմական դպրոց, որը տվեց մի քանի տասնյակ՝ ռազմական հմտություններով օժտված երիտասարդներ, 3. Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների հետ համագործակցության արդյունքում հայ հեղափոխականները շատ ավելի հեշտությամբ էին կարողանում ձեռք բերել այդ շրջանում ՅՅԴ–ի համար կենսական նշանակություն ունեցող զենք և գումար՝ հայ հեղափոխականներին և հայ ազգաբնակչությանը զինելու համար, 4. Հայ-մակեդոնական դատերի միացյալ ներկայացնելը միջազգային հանրությանն ու մեծ տերություններին ավելի մեծ ազդեցություն էր գործում, քան Հայկական դատի առանձին արձարժումը:

\*\*\*

**Акопян Карапет, - ЗАДАЧА АРМЯНО-БОЛГАРО-МАКЕДОНСКОГО СОТРУДНИЧЕСТВА В 1895-1907 ГГ.** – В 1894 г. Армяно-болгаро-македонское общение приводит к сотрудничеству. В течение 1895-1907 гг. неоднократно армянские и македонские суды совместно представляют европейскую общность. В 1901 г. в Адрианапольсе имело место армяно-македонская война против турецко-курдских сил. В 1905 г. македонцы тоже участвовали в Болгарии под покровительством болгарских властей изготовили оружие, патроны, бомбы, а в 1906-1907 гг. в Болгарии работала АРФ военная школа. В декабре 1906 г. в Женеве проходит греческий, македонский, болгарский, сербский, боснийский, герцеговинский и армянский революционный объединенный конгресс. В 1907 г. болгаро-македонские революционеры приветствуют решение 2-го съезда османской оппозиции в деле всеобщего сопротивления против султана Абдул Хамид.

\*\*\*

## ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ-բուլղար-մակեդոնական համագործակցության մասին տե'ս նաև «Հ. Յ. Դաշնակցության զինուորական դպրոցը (ընկ. Մարտիկ Յուհաննէսեանի յուշերը)», «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1931, թիւ 4, էջ 31-46:

ՀՀԴ Զինուորական դպրոցը, Նիւթեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Խմբ. եր. Փամպուքեան, Պէյրուք, Ե. հատ., 2007, էջ 368-380: